ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

«01» դեկտեմբերի 2016թ.

N 62 - 39/016

ՀՀ Շիրակի մարզ, գ Գորակապ
Հեռ. (093) 59-88-00

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ՀՈՎՍԵՓ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սիմոնյան
Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի դրույթի Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Շիրակի մարզի Գորակապի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 32-Ա ,33-Ն , 34-Ա և 35-Ա և36-Ն որոշումները:

Առդիր 14 թերթ

Գորակապի համայնքի ղեկավար Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 12091-16
01. 12 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զորակապ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Զորակապ, 2-18-91, dzorakap.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2016թվականի N 32-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զորակապի համայնքի ավագանին

Որոշում է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զորակապի համայնքի սեփականության 2016 թվականի գույքագրման փաստաթղթերը՝համաձայն հավելվածի:

ՀԱՆԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ 5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Պողոսյան Արեստակ ----------

Իգիթյան Արսեն ----------

Բաղդասարյան Մելիքսեթ ----------

Հակոբյան Ալբերտ ----------

Ռազմիկ Մարգարյան ----------

ԶՈՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

24 նոյեմբեր 2016 թվական

Գյուղ Զորակապ

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի Զորակապի համայնքի

ավագանու 2016 թվականի նոյեմբերի 24-ի

թիվ 32-Ա որոշման

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գույքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Հաշվեկշռի արժեքը	Գույքի տեխնիկական վիճակը
Գյուղապետարանի շենք	հատ	1	4763,8	Ենթակա է նորոգ
Բազզայի պահակատուն	հատ	2	80	Ենթակա է նորոգ
Բազզայի և գյուղապետարանի պարիսպ	մետր	230	975,5	Բարվոք վիճակ
Ռեզերվուարներ	հատ	11	470,0	Բարվոք վիճակ
Գրականություն	հատ	7769	342,0	Բարվոք վիճակ
Գազի վառարան	հատ	1	35,0	Բարվոք վիճակ
Սեղաններ	հատ	8	180,0	Բարվոք վիճակ
Մարդատար ավտոմեքենա գազ-24	հատ	1	700,0	Ենթակա է նորոգ
Սառնարան «Տոշիբա»»	հատ	1	89,3	Բարվոք վիճակ
Համակարգիչներ	հատ	3	--------	Բարվոք վիճակ
Պատճենահանման սարք	հատ	2	93,0	Բարվոք վիճակ
Դաշնամուր « Նոկտյուրն»	հատ	1	150,0	Բարվոք վիճակ
Դահլիճի նստատեղեր ՝աթոռներ	հատ	167	-------	Բարվոք վիճակ
Դռներ մետաղապլաստից	հատ	5	428,0	Բարվոք վիճակ
Ինտերնետային սարքավորում	կետ	1	120,0	Բարվոք վիճակ
Համայնքի խմելու ջրագիծ	կմ	3	622,0	Ենթակա է նորոգ
Համայնքի կոյուղագիծ	Գծ.մ	2350	8675,9	Բարվոք վիճակ
Փողոցային լուսավորման լապտերներ	հատ	112	3560,4	Բարվոք վիճակ
Աթոռներ փայտից փափուկ	հատ	9	71,6	Բարվոք վիճակ
Ճանապարհային տեսախցիկ	հատ	1	167,0	Բարվոք վիճակ
Ճանապարհային տեսախցիկ	հատ	1	167,0	Ենթակա է նորոգ
Լուսամուտներ մետաղապլաստից	հատ	17	1169,7	Բարվոք վիճակ

ԶՈՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զորակապ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Զորակապ, 2-18-91, dzorakap.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2016թվականի N 33-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 29-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ , 10-րդ և 11-րդ հոդվածների <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով , Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զորակապի համայնքի ավագանին

Որոշում է

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զորակապի համայնքի վարչական տարածքում 2017թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանել համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զորակապի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 10-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զորակապի համայնքի վարչական տարածքում 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 29-Ն որոշումը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԵՍՏԱԿ----------

ԱՐՍԵՆ ԻԳԻԹՅԱՆ ----------

ՄԵԼԻՔՍԵԹ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ----------

ՌԱԶՄԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ ----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

24 նոյեմբերի 2016 թվական

Գյուղ Զորակապ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ձորակապի համայնքի
ավագանու 2016 թվականի
նոյեմբերի 24 –ի թիվ 33-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝
4500 (չորս հազար հինգ հարյուր) դրամ.

2) սույն կետի «1)» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝
9000 (ինը հազար) դրամ

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝
12000 (տասներկու հազար) դրամ.

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝
15000 (տասնհինգ հազար) դրամ.

դ. 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝
30000 (երեսուն հազար) դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար
900 (ինը հարյուր) դրամ.

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար
1500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ:

2. Համայքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում; ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 900 (ինը հարյուր) դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վարականգման կամ արդիականացման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն ապա ,բացի առյն կետի «1)» -ին ենթակետով սահմանված դրույքաչափի՝ կիրառել նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում; ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառել նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը.

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 / երեք հազար /դրամ
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.001 դրամ
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13.001 դրամ
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20.001 դրամ
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25.001 դրամ
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45.001 դրամ

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 / երկու հազար /դրամ
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.001 դրամ
գ.51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13.001 դրամ
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20.001 դրամ
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25.001 դրամ
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45.001 դրամ

5. Համայնքի տարածքում՝
1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350(երեք հարյուր հիսուն) դրամ, մեկ քառակուսի մետրի համար,

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել

200000 (երկու հարյուր հազար) դրամ,

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 30 000(երեսուն հազար) դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝
հիմնական շինությունների ներսում ՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 / հինգ հազար /դրամ
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5.001 դրամ
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 10.001 դրամ
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.001 դրամ
ե.201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20.001 դրամ
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30.001 դրամ

ոչ հիմնական շինությունների ներսում՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000/ մեկ հազար/ դրամ
բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1.001 դրամ
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2.001 դրամ
դ.101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4.001 դրամ
ե.201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8.001 դրամ
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.001 դրամ

5)Համայնքի սեփականության հանդիսացող տարածքներում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղերում ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը կայանելու համար տեղական տուրք սահմանել՝

ա. յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝	300 (երեք հարյուր) դրամ
բ. յուրաքանչյուր մեկ օրվա համար՝	2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ
գ. մեկ շաբաթվա համար՝	5000 (հինգ հազար) դրամ
դ. մեկ ամսվա համար՝	25000 (քսանհինգ հազար) դրամ
ե. մեկ տարվա համար՝	100000 (մեկ հարյուր հազար) դրամ

6.Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր տարվա համար տեղական տուրքը սահմանել՝
50000 (հիսուն հազար) դրամ:

7. Համայքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիք տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25000 (քսանհինգ հազար) դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 (հիսուն հազար) դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 (երկու հարյուր հազար) դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 1000000 (մեկ միլիոն) դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 (մեկ հարյուր հազար) դրամ.

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային ապիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 (երկու հազար) դրամ

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ

3) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ

4) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ

Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանել տեղական տուրք՝ 375/երեք հարյուր յոթանասունհինգ/ < < դրամ:

Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար 150 / մեկ հարյուր հիսուն / < < դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 1000 (մեկ հազար) դրամ:

10.Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 50000 (հիսուն հազար) դրամ:

11. Համայնքի տարածքում (բացառությամբ Երևան քաղաքի) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 3000 (երեք հազար) դրամ

12.Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 30000/երեսուն հազար / դրամ:

13. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր տարվա համար՝

1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2.500.000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ.

2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5.000.000 (հինգ միլիոն) դրամ.

3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7.000.000 (յոթ միլիոն) դրամ.

4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10.000.000 (տաս միլիոն) դրամ:

14. Տեղական վճարների դրույքաչափեր՝

1) Համայքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու ու հաստատելու ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել՝ 10000 (տաս հազար) դրամ.

2) Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց 1 հա-ի համար փոխհատուցման վճարը սահմանել՝ 40000 (քառասուն հազար) դրամ.

3) Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մեկ մասնակցից վճարը սահմանել 1000 (մեկ հազար) դրամ.

4) Աղբահանության վճարը սահմանել՝

ա. կենցաղային աղբի համար՝

ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100(մեկ հարյուր) դրամ, կամ ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 (հինգ) դրամ.

բ. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝	2000 (երկու հազար) դրամ, կամ
ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝	8000(ութ հազար) դրամ:

5) Շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել՝ 10000 (տաս հազար) դրամ:

ՁՈՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ձորակապ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Ձորակապ, 2-18-91, dzorakap.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2016 թվականի N 34-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 27-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի , 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <<բ>> ենթակատի դրույթներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ձորակապի համայնքի ավագանին

Որոշում է

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ձորակապի համայնքի ղեկավարի 2017 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանել Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 37,79 %-ի չափով 250000 / երկու հարյուր հիսուն հազար դրամ /:

2. Ուժը կորցրած օանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ձորակապի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 10-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ձորակապի համայնքի ղեկավարի 2016 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանելու մասին>> թիվ 27-Ա որոշումը:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի մեկից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԵՍՏԱԿ _____

ԱՐՍԵՆ ԻԳԻԹՅԱՆ _____

ՄԵԼԻՔՍԵԹ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ _____

ՌԱՉՄԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ _____

ՁՈՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

24 նոյեմբերի 2014 թվական

Գյուղ Ձորակապ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զորակապ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Զորակապ, 2-18-91, dzorakap.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2016 թվականի N 35-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻԿԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 31-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի , 31-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանը , Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զորակապի համայնքի ավագանին

Որոշում է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զորակապի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2017 թվականի քանակը՝9 / ինը/:

2.Հատատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զորակապի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2017 թվականի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը ՝համաձայն հավելվածի:

3.ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զորակապի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զորակապի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2016 թվականի քանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 28-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 31-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԿՈՂՄ -4 ԴԵՄ-0 ՁԵՌՆՊԱՀ-0

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԵՍՏԱԿ ----------

ԱՐՍԵՆ ԻԳԻԹՅԱՆ ----------

ՄԵԼԻՔՍԵԹ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ----------

ՌԱԶՄԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ ----------

ԶՈՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ---------- ԱՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

24ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016ԹՎԱԿԱՆ ԳՅՈՒՂ ԶՈՐԱԿԱՊ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ձորակապի
համայնքի ավագանու 2016 թվականի
նոյեմբերի 24-ի թիվ 35-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԿԱՊԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1	Պաշտոնի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը / դրամ	Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ %	Համայնքային ծառայության պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանված հավելավճարը		Ընդամենը / դրամ /
					Տոկոսը	Հավելավճարի չափը / դրամ /	
2			Հայեցողական	Պաշտոններ			
3	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	132000	52,80	-------	------	132000
4			Համայնքային	Ծառայության	Պաշտոններ		
5	Աշխատակազմի քարտուղար ծածկագիր 1.2-1	1	188000	75,2	5,0	9400	197400
6	Գլխավոր մասնագետ հաշվապահ ծածկագիր 2.3-1	1	186000	74,4	5,0	9300	195300
7	Առաջատար մասնագետ ծածկագիր 3.1-1	1	73000	29,2	-------	-------	73000
8			Տեխնիկական	Սպասարկման	Անձնակազմ		
9	Համակարգչային օպերատոր	1	80000	32,0	-------	-------	80000
10	գրադարանավար	1	73000	29,2	-------	------	73000
11	Ակումբավար	1	73000	29,2	-------	------	73000
12	Հավաքարար	1	73000	29,2	-------	------	73000
13	Գյուղապետ.պահակ	1	80000	32,0	--------	--------	80000
14	Ընդամենը	9	958000			18.700	976700

Ձորակապի համայնքի ղեկավար Արամ Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զորակապ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Զորակապ, 2-18-91, dzorakap.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 36-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 32 - Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զորակապի համայնքի ավագանին

Որոշումէ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զորակապի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զորակապի համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 32-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները:

1.Բյուջեի ծախսային մասի

1) Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Ապարատի պահպանման ծախսեր>> բաժնի «Տրանսպորտային նյութեր» տողի 4264 հոդվածի <<400,0>> թիվը փոխարինել <<295,0>> թվով , այդ թվում

ա. գործառնական դասակարգման բաժին 01, խումբ 1, դաս 1 << Ապարատի պահպանման ծախսեր >> բաժնի «Տրանսպորտային նյութեր» տողի <<400,0>> թիվը փոխարինել <<295,0>> թվով:

2) Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Ապարատի պահպանման ծախսեր>> բաժնի «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ » 4239 հոդվածի <<0,0>> թիվը փոխարինել <<105,0>> թվով , այդ թվում

ա.գործառնական դասակարգման բաժին 01 , խումբ 1 , դաս 1<<Ապարատի պահպանման ծախսեր>> բաժնի «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տողի <<0,0>> թիվը փոխարինել <<105,0>> թվով:

3) Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Կրթություն>> բաժնի «Բարձրագույն կրթություն» տողի 4727 հոդվածի <<650,0>> թիվը փոխարինել <<570,0>> թվով, այդ թվում

ա.գործառնական դասակարգման բաժին 09 , խումբ 4, դաս 1 << Կրթություն >> բաժնի «Բարձրագույն կրթություն» տողի <<650,0>> թիվը փոխարինել <<570,0>> թվով:

4) Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ջրամատակարարում>> բաժնի «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տողի 4239 հոդվածի <<0,0>> թիվը փոխարինել <<80,0>> թվով, այդթվում

ա.գործառնական դասակարգման բաժին 6 , խումբ 3, դաս 1 << Ջրամատակարարում>> բաժնի «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տողի <<0,0>> թիվը փոխարինել <<80,0>> թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ -4 ԴԵՄ-0 ՁԵՌՆՊԱՀ-0

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԵԼԻՔՍԵԹ

ԻԳԻԹՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌԱՉՄԻԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԵՍՏԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

24 նոյեմբերի 2016 թվական

Գյուղ Ջորակապ